ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՓԱՐԻԶՈՒ ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԷՍ

ՄԵՐԶԱՒՈՐ սրահն Դանեաց հանդէսն է. իւր որմունքն գեղազարդեալ են Ցանիմարքայի գլխաւոր դղեկաց նկարուն. սեղանոց և դարանաց վրայ կը փայլին արծաթեայ և ոսկւոյ կանաչագունի հետ խառն՝ հին պէսպէս գործուածք, Գոբենհակի արքունի գործատան արտադրութիւնքն, ընտիր քանդակք կահկարասիք և իւր հռչակեալ երկաթագործութիւնն և թռչնոց փետրոյ վաճառականութիւնն։ Աստի կը մտցուի 'ի մասն Աւստրիոյ–Հունգարիոյ, որ սեպհական հաճոյատեսիլ երևոյթի մի ստացած է Պոհեմիոյ ապակեաց հանդիսիւն, յորս գոյնն և ոսկին կը մրցին անօթոյն ընտիր ճաշակին և ձևոյն հետ։ Մերձ անոր վիճնայի կաշեգործութեան ցոյցն է և գորգոց հանդիսաւորութիւնն. քիչ մ'անդին հանքաց և փայտից հաւաքումն՝ Աւստրիոյ–Հունգարիոյ երկու մեծագոյն հարստութիւնքն. ապա կոշկայ և մուճակաց ցոյցն, և հուսկ ուրեմն իւր համբաւաւոր դիւնեաց, ցորենոյ և մսրացորենի հանդէսն։

Իտալիա՝ հինգ հազար քառակուսի մէդր տեղ ստացած է իւր եօթը հարիւր հանդիսադրացն. զուարթ կարմրագոյնն կը տիրէ իւր ճոխ նկարուց վրայ 'ի ներքս, միևչդեռ արտաքին երեսը միւսխոնէ ձևացած է. ապակեղէնքն՝ 'ի մանաւորի Վենետկոյ Պալվիադի և Մուրանոյի, և Միլանու Մէնքայի, արտաքոյ կարգի գեղեցկութիւն և զուարթութիւն մի կու տան սրահիցս. շատ իսկ ծանօթ է այս գործատանց համբաւն, սակայն և այսու դժուար է երևակայել այս երեք 'ի միասին հաւաքեալ և հակառակ մրցող գործատանց արտադրութեանց

զարմանալի հանդիսին երեւոյթն. այս Նուրբ և ազնուական անօթոց հակապատկերը կը կազմեն Պուրանոյի ասղնեգործքն, և Փլորենտիոյ կիտուածանկարքն, Նէապոլսոյ գեղանի բուստէ գործուածքն, և 'ի վերջոյ Գարրարայի կճէիւք խօսուն զարմանագործ արձանիկք և անդրիք։

Բիչ մ'անդին դէզ դէզք ճոխահարուստ մետաքսից կը գրաւեն զաչս. կը մտնես 'ի սրահն և կ'իմանաս որ Զուիցերիոյ հանդիսին մէջն ես, որոյ Ցուրիք քաղաքին կերպասուց ցոյցն նախ ընդ առաջ կ'ելնէ քեզ. յետոյ Նէօշաթելի և Ճինեվրայի ժամացոյցքն, Սէն-կալի ասղնեգործքն, ուրանօր եկեղեցական զգեստուց հարուստ հանդէս մի կը տեսնես. և հետզհետէ յառաջ վարելով քայլերդ՝ կարմիր ենթակայի վրայ սպիտականիշ խաչով զարդարուած դրօշակաց մէջ, այս երկրիս զանազան արուեստից և բերոյ հանդիսաւորութեանէն կը գտնուիս յանկարծ փոխադրեալ Միացեալ Նահանգաց հանդիսին մէջ, որ իւր մեծատարած ընդարձակութեան համեմատ՝ ընդարձակագոյն տեղ մի կը գրաւէ յԱշխարհանդէսն քան զայլ տէրութիւնս։ Իւր հանդիսադիրքն են հազար հինգ հարիւր հոգիք։ Խուրձ խուրձք դրօշակայ կը կենդանացունեն ոսկեբեր և ադամանդաբեր հանքաց սրահքն, և Նիւ-Եօրքի մեծահարուստ ոսկերչաց և ակնավաճառաց ապակեդարանքն։ Մեծ սափոր մի 'ի ձոյլ արծաթոյ՝ մէկ մէդր և քսան և ութ հարիւրորդամէդր բարձրութեամբ, որոյ ծանրութիւնն է վաթսուն հազարագրամ՝ և արժէքն է հարիւր քսան և հինգ հազար ֆռանք՝ կը բարձրանայ 'ի միջավայրն սրահին։ Մերձ անոր կը գտնուի Թիֆանի վարդագոյն փայտէ դարանքն, որ զանազան ադամանդից և գոհարաց մէջ 'ի ցոյց դրած է նա մանեակ մի 1, 200, 000 ֆռանքաց արժողութեամբ։ Նշանաւոր է նա Մէկիտենի արծաթեայ գործուածքն, Գոլլամուրի բիւրեղքն և յախճապակեայքըն, Աւիզոլայի քարացած փայտքն, զէնք և հրացանք կատարելագործեալք, ծխախոտ, մուշտակք, գրելու՝ տպելու և կարելու մեքենայքն։ Ուրիշ մասի մը մէջ ունի մարացորենի կոչուած պալատն՝ որ այս տնկով շինուած է բովանդակապէս։

Քայլ մ'եւս յառաջ և կը մտնես Սպանիոյ մասին մէջ, ուր համահաւաքեալ կան եւս իւր գաղթականութեանց՝ Գուպա կղզւոյն, Փիլիպեանց և Բօրդօ-Ռիգոյի երկրագործական բերքն և կերակրեղէնք, գինիք և պտուղք։ Զանազան արաբաձեւ դարանաց մէջ զետեղուած է ծխախոտն, բուրդն և բամբակն, բանուած մետաղքն, միսը թարմ պահող ապակեայ սառնարանքն, մետաքսի և կտաւի գործուածքն և ասղնեգործքն։ Մասնաւոր չէնք մի սեպհականեալ է իւր հռչակաւոր գինեաց և ըմպելեաց, պտղոց և զաֆրանին՝ որոյ մեծ մշակութիւն և վաճառականութիւն կ'ըլլուի այս երկրիս մէջ։ Ասոր կը յաջորդէ Ռումանիոյ հանդէսն, որոյ ազգային յատուկ ճարտարապե-

digitised by A.R.A.R.@

տութիւնն 'ի դուրս կը ցատկէ յընդհանրէն. սրահիս ճակատն և ապակեդարանքն Ռումանիոյ եկեղեցեաց քանդակները կը յիշեցնեն, և մեծագոյն դարանն՝ ի մասնաւորի Օրտոկեշի հռչակաւոր կաթողիկէին օրինակ մ'է, իւր հանդիսին գլխաւոր մասն կը կազմէ արևելեան ասղնեգործեալ կերպասք և զգեստք, գորգք, մուշտակք և կաշեղէնք, որ պէս-պէս գեղեցիկ խումբեր և դէզք կը կազմեն աստ և անդ, ունելով 'ի միջավայրն վիթխարի աղէ արձան մը՝ լաւ ևս բուրգ մը՝ իւր աղեհանքաց օրինակ մի ընծայելով։ Քիչ մ'անդին կը յայտնուիդ Նորվեկիոյ ցոյցն՝ որում մասնակցած են երկու հարիւրի չափ հանդիսաւորքը։ Զանազան փոքր տնակք, որ այս աշխարհիս տանց գաղափարը կուտան, կը բովանդակեն գլխաւոր արուեստից արտադրութիւնքն, 'ի մասնաւորի մուշտակք և եղջերուի կաշիք, սպիտակ արջուց մորթք և գամ։ Սոյն երկիրս ունի և ծովային վաճառական նաւուց և կազմածոց ցոյց մի, յորմէ կը ստուգուի իւր երրորդ կարգն ունել յետ Գաղղիոյ և Գերմանիոյ աշխարհացն։ Նշանաւոր է ևս իւր կիտաձկանց որսոյ նաւուց և գործեաց ցոյցն, որ կը վերջացունէ այս աշխարհիս սեպհականեալ սրահից կարգն և կը մտցունէ 'ի Ռուսացն։

Վերջնոյս ճակատն և որմունքն Մոսկուայի բիւզանդական ճարտարապետութեամբ գլխաւոր շէնքերը կը ներկայացուցեն, հանդերձ Գրեմլինու պատերով, Դեհրեմի պատուհանօքն, Վասիլի–Լաժնիի աշտարակօքն և Իվան Ահաւորի զանգակատամբն։ Կարմիրն և կապտագոյնն ամենուրեք կը տիրեն։ Վիշապը ընդհարկանող Սրբոյն Գէորգայ մեծ վահանն դրան վրայ շքեղապէս կը փայլի, ընդ որ մտնելով՝ կը տեսնես 'ի միջավայրն սրահին, սեղանոց վրայ տարածեալ արծաթեայ և ոսկւոյ կիտուածք, կիտուածանկարք, մուշտակք, շալիք, Մոսկուայի բամբակեղէնք և մետաքսեղէնք։ Ուրիշ սրահ մի սեպհականեալ է նաւթի իւղոյն, քարիւղին, ալիւրի և ապխտեալ մսոց, խրիմու՝ 'ի մասնաւորի կալիցին իշխանի՝ և կախեթու գինիքն։

Ցունաստանն դրակից է Ռուսիոյ ցուցահանդիսին. իւր հին ազգային ճարտարապետութիւնը կը ներկայացունէ՝ 'ի ներքսակողմն շէնքին՝ Ամէնքի, Կորնթոսի, Սպարտայի և Թեբէի նկարքն. և չորս արդի ցունաստանի գլխաւոր քաղաքները, Պիրէոն, Սիրակուսայ, Գորֆու և Բաղրասն։ Իւր հանդէսն զարդարող նշանաւոր առարկայք են իւր գորգերն՝ որով պատած են որմունքն մեծաւ մասամբ, ապա Կորնթոսի և Ամէնքի կանանց մետաքսեայ ճոխ բանուածքն և լաթեղէնք, քիչ մ'անդին մարմարիոնից և հանքաց օրինակքն՝ յորս նորատեսիլ կարմրագոյն մարմարիոն մը կապտագոյն և սեագոյն երակօքն։ Իւր համբաւաւոր գինեաց և պտղոց հանդէսն առանձին տեղ մի կը բռնեն գինեբանութեան սեպհականեալ մասին մէջ։ Կը յայտնուիդ Սերպիոյ փոքրիկ՝ այլ գեղանի հանդէսն, իւր Սերպ–Բիւզանդական ճարտարապետութեամբն ջնարակեալ միւսիոնօք և գեղազարդեալ կճեայ

digitised by A.R.A.R.@

տախտակքն։ Արևելեան հին և նոր կապերտք և գորգք կը ծածկեն զորմունս, որոց վրայ կը հանգչին պէսպէս դարանք որք բանուած կերպասուց և չուխայից ակնախտիղ բազմութիւն մի կը պարունակեն. հոտաւէտ խունկք և արևելեան կենաց համար հնարեալ ամենայն երևակայեալ նիւթք և առարկայք սրահին մնացեալ մասն կը գրաւեն. ուրիշ մ'ևս իւր հանքածոյից և ցամաք պտղոց սեպհականեալ է։

Զինատան ևս իւր տաճարն ունի համազգային կեդրոնիս մէջ, զարդարեալ իւր եռակլի աշտարակօքն, քանդակեալ և ազգային ճաշակաւ գունաւորեալ փայտիւքն, Պամպուի կեղևօք շատրուաններով, որ ըստ մեծի մասին կը բովանդակեն բանուած մետաքսեղէնք և կերպասք, փղոսկրի քանդակք, եբենոսէ կահկարասիք, սանտալք, փղոսկրի և սատափի հետ խառն կիտուածանկարք, թէյ, և այլն. մինչդեռ Ցարոնացւոյն ցոյցն՝ որոյ տաճարն իշխանական ապարան մ'է իւր տաճարաց ոճոյն վրայ յօրինեալ, կը ներկայացնէ առաւելապէս յախճապակեայք, այլ և մետաքսեղէնք։ Հետաքրքրական է ևս Սիամի ցուցահանդէսն, յորում մեծ տեղ գրաւած են արքունական հանդերձքն, արանց և կանանց բանուած ծաղկազարդ զգեստքն, տեղայի գահաւորակքն, երաժշտական գործիներն, փղոսկրէ գործուածքըն և ձիու կազմածքն. անտի կը մտնես'ի Պարսկական մասն, յորում կապերտք և գորգք զմբեթազարդ սրահն վերուստ'ի վայր կը պատեն, մինչդեռ դարանք խիտ և հոծ են յախճապակէիւք, սրովք և դանակօք և պէսպէս հնութեամբք և ակամիւք։ Անտի կը մտնես յԵգիպտականն՝ որոյ եզական ցուցահանդէսն է Գահիրէի փողոց մի. Խալիֆայից ժամանակին ոճով շինուած՝ այս փողոցս կ'ընծայէ Ալճերիոյ և Դունուզի ճարտարապետութիւնն, որչափ հնութիւնք կարելի եղև հաւաքել. այսպէս իմն, մուշարապիայքն երկու և երեք հարիւր տարուան հնութիւն մ'ունին. դրունք և պատուհանք տանց և անկիւնակալք՝ հնոյն Եգիպտոսի թաղի մը երևոյթը կու տան, յորում կան երկու մզկիթ, մի վարժարան, մի մինարէ, կարգ մի հնացեալ խանութից՝ յորս տեղացի գործաւորք և վաճառականք իրենց նիւթերը և ապրանքն կամ կը գործեն կամ կը վաճառեն. ոսկերիչն իւր թանկագին գործուածն կը բանի, ջուլհակն իւր լաթը կը գործէ, բրուտն իւր կաւը կը թրծէ, անուշարարն՝ իւր նորանոր տեսօք և համով անուշներէն անցորդաց կը հրամցընէ. որք Եգիպտոսի սպիտակ իշոց վրայ հեծած՝ իշավարին խնամոցն իրենք զիրենք յանձնած են՝ Եգիպտոսի այս երևակայեալ Գահիրէի թաղին մէջ շրջելու։

Շարունակելի

Հ. ԳԵՈՐԳ ՊԱՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@